

է հայտաղանգին . Պ . Պենլեանի ձեռնարկը այդ տևականութ մեզի օգտակար կրնայ ըլլալ եւ արժանի է ամէն քաջալերութեան : Աւրախ եղանք իմանալով որ Պ . Պենլեան արդէն յուսալց է իրեն հարկաւոր եղած զումարը զբանելու :

Իր խումբը կաղմելու համար եղիստոս դառնալէ առաջ Պ . Պենլեան որոշած է , Բարիզի հայ երիտասարդութեան խնդրանքով , Պէտքիթաշլեհանի «Ալրչակ Բ .»ը ներկայացնել . արուեստասէրներու խումբի մը օդնութեամբ , քաջարի հայ հասարակութեան առջև : Շատ սիրուն նորութիւն մըն է ասի մեր զալթականութեան համար (առաջին անդամ պիսի ըլլայ որ Բարիզի մէջ հայկական թատրոնաց մը ամբողջութեամբ պիտիներկացնուի) . եւ վստահ ենք որ Պ . Պենլեանի այս ներկայացնումը պիսի գանէ Բարիզի հայոց կողմէ այն խրախուսանքը որուն արժանի է :

«Ալրչակ Բ .»ի ներկայացնումը տեղի պիտի ունենայ յունուար 14ի իրեկունը , բնորաւուու թատրոնը , (12 , Boulevard des Italiens) :

Պ Ա Տ Բ Ի Ա Ր Ք Ա Ր Ա Ն Ը

Պոլսէն , ամենասույր աղբիւրէ մը , մեզի կը հաղորդեն հետեւեալ քամոնեցուցիչ տեղեկութիւնները : Եպյութեամբ կ'ընջօրինակնէն նամակագրին տողերը .

«Դիմէօք ինչի վրայ կը դառնային երկարածիր ժողովները որոնք տեղի ունեցան Տատեանի տանը վերջերս , ուր կար մը ենթակեցաներ յաճախ հրակուած էին : Դուռը հրաճանազած էր Տատեան - Օրմանեան - Նորառանկիան երեակին որպէսի թաքրիր մը յդեն կառապարութեան , յայտարարելով թէ Հայութը իրենց հաւատարմութիւնը յոյց առլու համար կը յայտարարեն որ պատրաստ են ծառայելու օսմանեան բանակին իբրև զինուոր , ուր որ պարտօք զինուոր կոչէ , եւ թէ Պատրիարքարանին հաճոյքն ունի զայս հաստատելու եւ հազորգելու վեհափառ Սուլամինին» :

«* ը ու * * ը , եւ իրենց հնամելուու թեամբ միւս եկեղեցականներն ալ , համամութիւն չեն յայտանձ՝ հակառակ կարգ մը սպասնալիքներու . Վարչութիւնը չէ համարձակած առանց եկեղե-

ցականներու ստորագրութեան Դրան հադրուել ազդին այդ ենթարկեալ արագ մարդութիւնը : Օրմանեան Դրան մասնածէ եկեղեցականներն մէկ քանին՝ իբրև խափանարար իր ջանքերուու :

«Պատրիարքարանին «քարու - քեհեասի» օնմանը , Արթին է ֆէնսիր , Զապթիէն եւ այլ թուրք պաշտօնատուններ կ'առաջնորդէ հայ կիսներ եւ աղջիկներ որոնք թախանձերիք ինդիբիներ ունին Դրան կամ Պատրիարքարանին մօտ , եւ կամ բանապիկանիք մը ազատաման բարիխուութիւնը ունին հայցելիք . այդ աղջիկներն ու կիսները պահանատանց մէջ կը լլլ-կուին , կը պղծուին , եւ Արթին , իր այս հրշային կաւատութեան զարքը կը ստանայ թուրք պաշտօնեաններէն : խելայել կը մեկնին , եւ բնականարար մտքերնուն չեն անցըներ անզամ մըն ալ կրկնել իրենց զեմումը :

«Այս Արթինը հիանալի զոյդ մը կը կ'ազմէ Ֆիդայն Տէր-Ներէսեան ըստած վաշխառուին հետ , որ թէ համարակալ է եւ թէ համարառու , թէ քաղաքական ժողովու անդամ է եւ թէ միանամայն ի ընորդ Օրմանեանի՝ Պատրիարքարանի «քարու - քեհեասի» սոսկալիք ճիւղալ մը . Պատրիարքարանի անձուկ սնտուկը յանձնենթագրերու ծախքերու կը ծառայինքնէ , որոնց փուստիւն կը պատրաստէ նոյն ինքն այդ վաշխառուն , եւ Օրմանեան կը վաւերացնէ այդ պազակն փուստլան ...»

Ուրեմն պարզ պէն որչ մը դարձ ած է Հայոց Պատրիարքարանը , Երևազգ-Դէօչաքին մէկ մանրանկարը ...

Խնդիր է գիտանալ թէ միշեւ հօրք հայ ժողովուրդը պիտի հանդուրժէ այս հանդիսաւոր ուժագրծութիւններուն անպատճան շարունակութիւն : Պատրիարքարանին այս ամօթալի կացութեանը հանդէպ , կուսակցութիւններու պայքարները , քաղաքական ծրագրի կամ ուղղութեան վէճերը կը դադրին եւ միակ անխանդ զգացումը մը երեւան կուզայ , — բացարձակ զայրոյթ — Այդ զգացումը բովանդակ հայ ժողովրդին զգացումն է :

Եւ վայ անոնց որ բազմաչարչար ժողովրդի մը զայրոյթին հետ կը խազան :